3 Նեփի 27-4 Նեփի
(ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-25-Ը)

Ի՞նչ է նշանակում իսկապես դարձի գալ

Փրկիչի հայտնությունից հետո նեփիացիները գրեթե 200 տարի ապրեցին միասնաբար և խաղաղ պայմաններում, քանի որ «ամբողջ ժողովուրդը դարձի էր եկել դեպի Տերը» (4 Նեփի 1.2):

Նեփիացիների արդար արարքների ուրիշ ի՞նչ օրինակներ գիտեք: Դուք կարող եք կարդալ 4 Նեփի 1.2-15 հատվածները և լրացնել ձեր գտած օրինակները.

- _____
- _____



Երջանկություն և միություն

Նեփիացիները երջանիկ էին և միասնական՝ իրենց արդար գործերի միջոցով (տես 4 Նեփի 1.2-15):

- Նրանք արդար և բարյացակամ էին միմյանց հանդեպ:
- Նրանք հետևում էին Քրիստոսի պատվիրաններին:
- Նրանք խոնարհ էին ծոմապահության և աղոթքի միջոցով:



Վիշտ և երկպառակություն

Ցավոք սրտի, միասնականության և երջանկության այդ տարիները երկար չտևեցին: Որոշ ժամանակ անց նեփիացիները դադարեցին հնազանդվել Աստծո պատվիրաններին (տես 4 Նեփի 1.24-31): Հետևանքներ.

- Նրանք դարձան եսասեր և հպարտ:
- Նրանք կառուցեցին իրենց իսկ եկեղեցիները՝ ֆինանսական շահի համար:
- Նրանք մերժեցին Քրիստոսի Եկեղեցին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Համեմատեք արդարակյաց նեփիացիների երջանկությունը վշտի հետ, երբ նրանք անարդար էին: Խորհեք տարբերությունների շուրջ և գտեք ուղիներ՝ ավելի լիարժեք առ Տերը դարձի գալու համար:
- Կարո՞ղ եք ընտրել մի բան, որը կարող եք բարելավել ձեր կյանքում:
- Ինչպե՞ս կարող են այդ բաները ավելի մոտեցնել ձեզ ձեր ընկերներին, ընտանիքին և Տիրոջը:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈՇ ԲԼԱՔ